# ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/34-2>>

ք. Երևան --20-- նոյեմբերի 2017թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Նիկոյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) նախագծման համար հիմք հանդիսացող նախագծային առաջադրանքների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **418700 (Չորս հարյուր տասնութ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ**:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է **9** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**7.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանը:**

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտի փող. 1 | ք. Երևան, Բյուզանդի 1/3 |
| Կենտրոնական գանձապետարան | <<Էվոկաբանկ>> ՓԲԸ |
| ՀՀ 900032313042 | Հ/Հ 1660001274300100 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 02707077 |
| Գ. Չթրյան | Տնօրեն Ա. Նիկոյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | |

Հավելված 1
-20- նոյեմբերի 2017թ. կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/34-2
ծածկագրով գնման պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների**

ՀՀ դրամ

| Հ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | Հ/Մ | միավոր գինը | ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | կատարման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | հասցեն | ժամկետը |
| 12 | | 1. Նախագծերը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն<br>2. Շինարարական հրապարակը կազմակերպել համաձայն Երևանի ավագանու 16.03.2012թ. №405Ն որոշման սահմանված պայմաններով:<br>3. Նախագծերը ներկայացնել 7 օրինակից.<br>4. Նախագիծը ներկայացնել փորձաքննությամբ<br>5. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ<br>6. Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով<br><br>**Արարկիր վարչական շրջանի բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների համար առաջադրվում է.**<br>**Մամիկոնյանց փ. 62 շենքի բակ**<br>**• Կազմել տեխնիկական եզրակացություն հաստատության փաստացի իրավիճակի մասին**<br>Տեխնիկական եզրակացությունում արտահայտել.<br>• Հիմնանորոգվելիք տարածքների առկա վիճակը: | դրամ | 58000 | 58000 | 1 | Մամիկոնյանց փ. 62 շենքի բակ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30-րդ օրացուցային օրը ներառյալ |

- Հարակից տարածքում անցնող գազատարի, էլեկտրալարերի և ջրատար խողովակների առկայության մասին տեղեկատվությունը:
- Հարակից կանաչապատ տարածքի պահպանման մասին տեղեկատվությունը:
- Տարածքներում նախատեսվող շատրվանների առաջարկություններ:
- Տարածքներում նախատեսվող արտաքին լուսավորությունների անցկացման մասին առաջարկություններ:
- Տարածքներում նախատեսվող նստարանների կառուցման և կամ տեղադրման մասին առաջարկություններ:
- Տարածքներում նախատեսվող փոքր աղբամանների տեղադրման մասին առաջարկություններ:
- Տարածքներում նախատեսվող խմելու ջուր և կոյուղի ապահովման մասին առաջարկություններ:
- Տարածքներում նախատեսվող մանկական խաղահրապարակների կառուցման կամ տեղադրման մասին առաջարկություններ:
- Բարեկարգման աշխատանքների ծավալների և օգտագործման նյութերի մասին առաջարկություններ:
- Շահագործման ընթացքում իրականացված բոլոր տիպի լրացումների և փոփոխությունների առաջարկություններ:

**2.Տեխնիկական եզրակացության արդյունքներին համաձայն ներկայացնել**

ա/ Բակային տարածքների բարեկարգման և հիմնանորոգման աշխատանքների էսքիզ-նախագիծ՝ նախնական համաձայնության:

բ/ Բակային տարածքների բարեկարգման և հիմնանորոգման աշխատանքների թերությունների ակտ՝ նախնական համաձայնության:

գ/ Առաջադրանքի համաձայն կազմել բակային տարածքների բարեկարգման և հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների փաստաթղթեր:

դ/ Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն:

ե/ Նախագծերը ներկայացնել 7 օրինակից՝ սահմանված կարգով փորձաքննություն անցած:

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 3. Նախագծա-նախահաշվային փոստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի Կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի հետ:<br><br>4. Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով: | | | | | | |
| | | | | | | | | |
| 13 | | 1. Նախագծերը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն<br>2. Շինարարական հրապարակը կազմակերպել համաձայն Երևանի ավագանու 16.03.2012թ. №405Ն որոշման սահմանված պայմաններով:<br>3. Նախագծերը ներկայացնել 7 օրինակից.<br>4. Նախագիծը ներկայացնել փորձաքննությամբ<br>5. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ<br>6. Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով<br><br>Արաբկիր վարչական շրջանի բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների համար առաջադրվում է.<br><br>Ն. Զարյան 15 շենքի բակ<br>1• Կազմել տեխնիկական եզրակացություն հաստատության փաստացի իրավիճակի մասին<br><br>Տեխնիկական եզրակացությունում արտահայտել.<br>• Հիմնանորոգվելիք տարածքների առկա վիճակը:<br>• Հարակից տարածքում անցնող գազատարի, էլեկտրալարերի և ջրատար խողովակների առկայության մասին տեղեկատվությունը:<br>• Հարակից կանաչապատ տարածքի պահպանման մասին տեղեկատվությունը:<br>• Տարածքներում նախատեսվող շատրվանների առաջարկություններ:<br>• Տարածքներում նախատեսվող արտաքին լուսավորությունների անցկացման մասին | դրամ | 68000 | 68000 | 1 | Զարյան 15 շենք | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30-րդ օրացուցային օրը ներառյալ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | առաջարկություններ:<br><br>• Տարածքներում նախատեսվող նստարանների կառուցման և կամ տեղադրման մասին առաջարկություններ:<br>• Տարածքներում նախատեսվող փոքր աղբամանների տեղադրման մասին առաջարկություններ:<br>• Տարածքներում նախատեսվող խմելու ջուր և կոյուղի ապահովման մասին առաջարկություններ:<br>• Տարածքներում նախատեսվող մանկական խաղահրապարակների կառուցման կամ տեղադրման մասին առաջարկություններ:<br>• Բարեկարգման աշխատանքների ծավալների և օգտագործման նյութերի մասին առաջարկություններ:<br>• Շահագործման ընթացքում իրականացված բոլոր տիպի լրացումների և փոփոխությունների առաջարկություններ:<br>2. **Տեխնիկական եզրակացության արդյունքներին համաձայն ներկայացնել**<br>ա/ Բակային տարածքների բարեկարգման և հիմնանորոգման աշխատանքների էսքիզ-նախագիծ՝ նախնական համաձայնության:<br>բ/ Բակային տարածքների բարեկարգման և հիմնանորոգման աշխատանքների թերությունների ակտ՝ նախնական համաձայնության:<br>գ/ Առաջադրանքի համաձայն կազմել բակային տարածքների բարեկարգման և հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների փաստաթղթեր:<br>դ/ Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն:<br>ե/ Նախագծերը ներկայացնել 7 օրինակից՝ սահմանված կարգով փորձաքննություն անցած:<br><br>3. **Նախագծա–նախահաշվային փոստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի Կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի հետ:**<br>4.Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով: | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 22 | 71241200/ | 1. Նախագծերը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն<br>2.Շինարարական հրապարակը կազմակերպել համաձայն Երևանի ավագանո16.03.2012թ. №405Ն որոշման սահմանված պայմաններով:<br>3.Նախագծերը ներկայացնել 7 օրինակից,<br>4.Նախագիծը ներկայացնել փորձաքննությամբ<br>5.Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ<br>6.Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով<br>**Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգման աշխատանքների համար առաջադրվում է.**<br>Կոմիտասի պող. 54 շենք<br>**1. Կազմել տեխնիկական եզրակացություն հաստատության փաստացի իրավիճակի մասին**<br>Տեխնիկական եզրակացությունում արտահայտել.<br>- Վերանորոգվելիք թեք տանիքների առկա վիճակը:<br>- Հարակից տարածքով անցնող ալեհավաքների և էլեկտրալարերի առակայության մասին տեղեկատվություն<br>- Տարածքներում նախատեսվող ճաղավանդակների կառուցման կամ տեղադրման մասին առաջարկություններ:<br>- Բարեկարգման աշխատանքների ծավալների և օգտագործման նյութերի մասին առաջարկություններ:<br>- Շահագործման ընթացքում իրականացված բոլոր տիպի լրացումների և փոփոխությունների առաջարկություններ:<br>**2.Տեխնիկական եզրակացության արդյունքներին համաձայն ներկայացնել**<br>ա/ Թեք տանիքների վերանորոգման աշխատանքների էսքիզ-նախագիծ՝ նախնական համաձայնության:<br>բ/ Թեք տանիքների վերանորոգման աշխատանքների թերությունների ակտ՝ նախնական համաձայնության: | դրամ | 73000 | 73000 | 1 | Կոմիտասի պող. 54 շենք | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 25-րդ օրացուցային օրը ներառյալ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | գ/ Առաջադրանքի համաձայն կազմել թեք տանիքների վերանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների փաստաթղթեր:<br><br>դ/ Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն:<br><br>ե/ Նախագծերը ներկայացնել 7 օրինակից՝ սահմանված կարգով փորձաքննություն անցած:<br><br>**3.Նախագծա–նախահաշվային փոստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Երևանի Արաբկիր վարչական շրջանի դեկավարի աշխատակազմի Կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի հետ:**<br><br>**4.Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով:** | | | | | | |
| | | | | | | | | |
| 23 | | 1. Նախագծերը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն<br><br>2.Շինարարական հրապարակը կազմակերպել համաձայն Երևանի ավագանու16.03.2012թ. №405Ն որոշման սահմանված պայմաններով:<br><br>3.Նախագծերը ներկայացնել 7 օրինակից.<br><br>4.Նախագիծը ներկայացնել փորձաքննությամբ<br><br>5.Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ<br><br>6.Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով<br><br>**Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգման աշխատանքների համար առաջադրվում է.**<br><br>Բաբայան 22<br><br>**1.Կազմել տեխնիկական եզրակացություն հաստատության փաստացի իրավիճակի մասին**<br>Տեխնիկական եզրակացությունում արտահայտել.<br>- Վերանորոգվելիք թեք տանիքների առկա վիճակը: | դրամ | 59900 | 59900 | 1 | Բաբայան 22 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 25-րդ օրացուցային օրը ներառյալ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | - Հարակից տարածքով անցնող ալեհավաքների և էլեկտրալարերի առակայության մասին տեղեկատվություն<br>- Տարածքներում նախատեսվող ճաղավանդակների կառուցման կամ տեղադրման մասին առաջարկություններ:<br>- Բարեկարգման աշխատանքների ծավալների և օգտագործման նյութերի մասին առաջարկություններ:<br>- Շահագործման ընթացքում իրականացված բոլոր տիպի լրացումների և փոփոխությունների առաջարկություններ:<br>**2.Տեխնիկական եզրակացության արդյունքներին համաձայն ներկայացնել**<br>ա/ Թեք տանիքների վերանորոգման աշխատանքների էսքիզ-նախագիծ նախնական համաձայնության:<br>բ/ Թեք տանիքների վերանորոգման աշխատանքների թերությունների ակտ՝ նախնական համաձայնության:<br>գ/ Առաջադրանքի համաձայն կազմել թեք տանիքների վերանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների փաստաթղթեր:<br>դ/ Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն:<br>ե/ Նախագծերը ներկայացնել 7 օրինակից՝ սահմանված կարգով փորձաքննություն անցած:<br>**3.Նախագծա-նախահաշվային փոստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի Կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի հետ:**<br>4.Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով: | | | | | | |
| | | | | | | | | |
| 24 | | 1. Նախագծերը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն<br>2.Շինարարական հրապարակը կազմակերպել համաձայն Երևանի ավագանո16.03.2012թ. №405Ն որոշման սահմանված պայմաններով:<br>3.Նախագծերը ներկայացնել 7 օրինակից.<br>4.Նախագիծը ներկայացնել փորձաքննությամբ | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | *5.Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ*<br><br>*6.Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով*<br><br>***Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգման աշխատանքների համար առաջադրվում է.***<br><br>Հակոբյան 2<br><br>***1.Կազմել տեխնիկական եզրակացություն հաստատության փաստացի իրավիճակի մասին***<br><br>*Տեխնիկական եզրակացությունում արտահայտել.*<br><br>*- Վերանորոգվելիք թեք տանիքների առկա վիճակը:*<br><br>*- Հարակից տարածքով անցնող ալեհավաքների և էլեկտրալարերի առկայության մասին տեղեկատվություն*<br><br>*- Տարածքներում նախատեսվող ճաղավանդակների կառուցման կամ տեղադրման մասին առաջարկություններ:*<br><br>*- Բարեկարգման աշխատանքների ծավալների և օգտագործման նյութերի մասին առաջարկություններ:*<br><br>*- Շահագործման ընթացքում իրականացված բոլոր տիպի լրացումների և փոփոխությունների առաջարկություններ:*<br><br>***2.Տեխնիկական եզրակացության արդյունքներին համաձայն ներկայացնել***<br><br>*ա/ Թեք տանիքների վերանորոգման աշխատանքների էսքիզ-նախագիծ՝ նախնական համաձայնության:*<br><br>*բ/ Թեք տանիքների վերանորոգման աշխատանքների թերությունների ակտ՝ նախնական համաձայնության:*<br><br>*գ/ Առաջադրանքի համաձայն կազմել թեք տանիքների վերանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների փաստաթղթեր:*<br><br>*դ/ Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն:*<br><br>*ե/ Նախագծերը ներկայացնել 7 օրինակից՝ սահմանված կարգով փորձաքննություն անցած:*<br><br>***3.Նախագծա–նախահաշվային փոստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Երևանի Արաբկիր վարչական շրջանի դեկավարի աշխատակազմի Կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի հետ:***<br><br>*4.Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով* | դրամ | 79900 | 79900 | 1 | Հակոբյան 2 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 25-րդ օրացուցային օրը ներառյալ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 26 | | *1. Նախագծերը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն*<br><br>*2.Շինարարական հրապարակը կազմակերպել համաձայն Երևանի ավագանո16.03.2012թ. №405Ն որոշման սահմանված պայմաններով:*<br><br>*3.Նախագծերը ներկայացնել 7 օրինակից.*<br><br>*4.Նախագիծը ներկայացնել փորձաքննությամբ*<br><br>*5.Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ*<br><br>*6.Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով*<br><br>***Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգման աշխատանքների համար առաջադրվում է.***<br><br>Բաբայան 36<br><br>***1.Կազմել տեխնիկական եզրակացություն հաստատության փաստացի իրավիճակի մասին***<br><br>*Տեխնիկական եզրակացությունում արտահայտել.*<br><br>*- Վերանորոգվելիք թեք տանիքների առկա վիճակը:*<br><br>*- Հարակից տարածքով անցնող այեհավաքների և էլեկտրալարերի առակայության մասին տեղեկատվություն*<br><br>*- Տարածքներում նախատեսվող ճաղավանդակների կառուցման կամ տեղադրման մասին առաջարկություններ:*<br><br>*- Բարեկարգման աշխատանքների ծավալների և օգտագործման նյութերի մասին առաջարկություններ:*<br><br>*- Շահագործման ընթացքում իրականացված բոլոր տիպի լրացումների և փոփոխությունների առաջարկություններ:*<br><br>***2.Տեխնիկական եզրակացության արդյունքներին համաձայն ներկայացնել***<br><br>*ա/ Թեք տանիքների վերանորոգման աշխատանքների էսքիզ-նախագիծ նախնական համաձայնության:* | դրամ | 79900 | 79900 | 1 | Բաբայան 36 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 25-րդ օրացուցային օրը ներառյալ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | բ/ Թեք տանիքների վերանորոգման աշխատանքների թերությունների ակտ՝ նախնական համաձայնության:<br><br>գ/ Առաջադրանքի համաձայն կազմել թեք տանիքների վերանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների փաստաթղթեր:<br><br>դ/ Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն:<br><br>ե/ Նախագծերը ներկայացնել 7 օրինակից՝ սահմանված կարգով փորձաքննություն անցած:<br><br>3.Նախագծա-նախահաշվային փոստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի Կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի հետ:<br><br>4.Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով: | | | | | | |
| | | | | | | | | |

*աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Սարգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
<< 900032313042
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ
ք. Երևան, Բյուզանդի 1/3
<<Էվոկաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1660001274300100
ՀՎՀՀ 02707077

Տնօրեն Ա. Նիկոլյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
20 նոյեմբերի 2017թ.կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/34-2
ծածկագրով գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 12 | 71241200 | Արաբկիր վարչական շրջանի Մամիկոնյանց փ. 62 շենքի բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 58000 | 58000 | **58000** |
| 13 | 71241200 | Արաբկիր վարչական շրջանի Ն. Զարյան 15 շենքի բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 68000 | 68000 | **68000** |
| 22 | 71241200 | Արաբկիր վարչական շրջանի Կոմիտասի պող. 54 շենքի թեք տանիքի վնրանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 73000 | 73000 | **73000** |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 23 | 71241200 | Արաբկիր վարչական շրջանի Բաբայան 22 շենքի թեք տանիքի վնրանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 59900 | 59900 | **59900** |
| 24 | 71241200 | Արաբկիր վարչական շրջանի Հակոբյան 2 շենքի թեք տանիքի վնրանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 79900 | 79900 | **79900** |
| 26 | 71241200 | Արաբկիր վարչական շրջանի Բաբայան 36 շենքի թեք տանիքի վնրանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 79900 | 79900 | **79900** |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | | **418700** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900032313042
ՀԿՀՀ 02593108

Գ. Չթրյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ
ք. Երևան, Բյուզանդի 1/3
<<Էվոկաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1660001274300100
ՀԿՀՀ 02707077

Տնօրեն Ա. Նիկոյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 3*
*«  »  20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| _____ | _____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  » «  » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«  »  20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը  Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը  պայմանագրի համարը
**գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.**

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

*Հավելված 10*
*« ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/34» ծածկագրով*
*բաց մրցույթի հրավերի*

**ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**(պայմանագրի կատարման ապահովում)**

ք. Երևան 20 նոյեմբերի 2017թ.

«ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Նիկոյանի <<նույն. քարտ՝ թիվ 001379148, տրված՝ 08.01.2013թ., 004-ի կողմից>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարան (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ « ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/34» ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն << կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ :

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ
ք. Երևան, Բյուզանդի 1/3
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ1660001274300100
ՀՎՀՀ 02707077

Ա. Նիկոյան _____
(ստորագրություն)

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N**

*(պայմանագրի կատարման ապահովում)*

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ1660001274300100

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 02707077

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ Երևանի քաղաքապետարան

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

10. Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900015211429

12. Գումարը թվերով և բառերով՝ 41870 (քառասունմեկ հազար ութ հարյուր յոթանասուն)

13. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD

14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ Պայմանագրի կատարման ապահովում

15. Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/34-2

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

| | |
|---|---|
| 19.ա. Շահառուի ստորագրությունները՝<br>/_____/<br>/_____/<br>19.բ. Կ.Տ. | 18.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/_____/<br>/_____/<br>18.բ. Կ.Տ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից<br>20.ա. /_____/<br>/ստորագրություն/<br>20.բ. Կ.Տ.<br>"___" ___ 20___ թ. | Կատարված է վճարողի բանկի կողմից<br>21.ա. /_____/<br>/ստորագրություն/<br>21.բ. Կ.Տ.<br>22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |